



Ուղեցույց

Մինակ ապրող կենսաթոշակատուներ

Յունուար, 2020թ.

Սոյն ուղեցույցը հովանավորուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներու պետական քարտուղարութեան Հանրութեան հետ կապերու գրասենեակի տրամադրած դրամաշնորհի շրջանակէն ներս: Այստեղ արտայայտուած է հեղինակի դիրքորոշումը, որուն համընկնումը Ամերիկայի Միացեալ Նահանգներու պետական քարտուղարութեան դիրքորոշումին հետ՝ պարտադիր չէ:

1. Հանրային պաշտպանի գրասենեակը իրաւաբանական անվճար օգնութիւն կը տրամադրէ՞ արդեօք կենսաթոշակառուներուն

Հանրային պաշտպանի գրասենեակը իրաւաբանական անվճար օգնութիւն կը տրամադրէ միայն մինակ բնակող կենսաթոշակառուներուն:

2. Ի՞նչ փաստաթուղթեր պէտք է ներկայացնէ մինակ բնակող կենսաթոշակառուն իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու համար

Մինակ բնակող կենսաթոշակառուն իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենեակ պէտք է ներկայացնէ կենսաթոշակի վկայականը կամ կենսաթոշակի գրքոյկ, բնակութեան վայրէն (համատիրութիւն, գիւղապետարան, ոստիկանութեան բնակչութեան տեղական գրանցամատեանը վարող տարածքային մարմին) տրուած տեղեկանքը ընտանիքի փաստացի կազմի (մինակ բնակելու) մասին տեղեկանք եւ անձը հաստատող փաստաթուղթը (անձնագիր):

3. Ո՞վ կենսաթոշակառու կը նկատուի

Կենսաթոշակառու կը նկատուի այն անձը, որուն գրաւոր դիմումին հիման վրայ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կը նշանակէ կենսաթոշակ, կամ ով օրէնքով սահմանուած իրաւունք (բացառութեամբ լիազօրագիրով ստացած իրաւունքի) ունի ստանալու կենսաթոշակ:

4. Ո՞րոնք են կենսաթոշակ նշանակելու իրաւասութիւն ունեցող մարմինները

Կենսաթոշակ նշանակելու իրաւասութիւն ունեցող մարմիններն են Հայաստանի Հանրապետութեան աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարարութեան ընկերային ապահովութեան պետական ծառայութեան (այսուհետեւ՝ ծառայութիւն) տարածքային ստորաբաժանումները, ինչպէս նաեւ՝ Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան նախարարութեան, Հայաստանի Հանրապետութեան արդարադատութեան նախարարութեան, Հայաստանի Հանրապետութեան արտակարգ իրավիճակներու նախարարութեան Հայաստանի փրկարար ծառայութեան, Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան առընթեր Հայաստանի Հանրապետութեան ոստիկանութեան, Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան առընթեր ազգային անվտանգութեան ծառայութեան՝ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումները:

5. Որո՞նք ունին կենսաթոշակի իրաւունք

Օրէնքով սահմանուած պայմանները բաւարարելու պարագային՝ կենսաթոշակի իրաւունք ունին Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիները, օտարերկրեայ քաղաքացիները կամ քաղաքացիութիւն չունեցող անձեր, եթէ օրէնքով այլ բան սահմանուած չէ:

6. Ինչպիսի՞ պարտականութիւններ սահմանուած են օրէնքով կենսաթոշակատուներուն համար

Կենսաթոշակատուն պարտաւոր է՝

ա) լիազօր մարմինն ներկայացնել իրեն վերաբերող հաւաստի տուեալներ,

բ) կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումին տեղեկացնել այն հանգամանքներուն մասին, որոնց առկայութիւնը կրնայ յանգեցնել կենսաթոշակի չափը փոփոխելուն կամ ատոր վճարումը դադրեցնելուն:

7. Ինչպիսի՞ հետեւանքներ կրնայ ունենալ այն պարագան, երբ կենսաթոշակատուն չի կատարեր օրէնքով սահմանուած իր պարտականութիւնները

Կենսաթոշակատուներու կողմէ օրէնքով սահմանուած իրենց պարտականութիւնները չկատարելու հետեւանքով կենսաթոշակատուին աւել վճարուած գումարները ենթակայ են ետգանձման՝ օրէնքով սահմանուած կարգով կամ դատարանի վճիռի հիման վրայ, եթէ դադրած է կենսաթոշակ ստանալու՝ անձի իրաւունքը:

8. Ո՞վ կը հանդիսանայ կենսաթոշակային ոլորտի պետական կառավարման լիազօր մարմինը

Աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարարութիւնն է կենսաթոշակային ոլորտի պետական կառավարման լիազօր մարմինը:

9. Օրենքով սահմանուած ինչպիսի՞ լիազորութիւններ վերապահուած են Աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարարութեան ընկերային ապահովութեան ծառայութեան

Աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարարութեան ընկերային ապահովութեան ծառայութիւնը՝

1) կը մշակէ եւ կը վարէ պետական կենսաթոշակային ապահովութեան միասնական քաղաքականութիւնը.

2) կը վերահսկէ պետական կենսաթոշակային ապահովութեան օրէնսդրութեան կիրառման օրինականութիւնը.

3) կ'իրականացնէ կենսաթոշակ նշանակելու, հաշուարկելու (վերահաշուարկելու) եւ վճարելու մեթոտական դեկավարումը.

4) կը կազմէ Հայաստանի Հանրապետութեան կենսաթոշակային համակարգի զարգացման պետական համապատասխան ծրագիրներ եւ կ'ապահովէ անոնց կատարումը.

5) գործատուներէն, պետական այլ մարմիններէն ու կազմակերպութիւններէն, ֆիզիքական անձերէն կը պահանջէ կենսաթոշակ նշանակելու եւ վճարելու համար անհրաժեշտ փաստաթուղթեր, իսկ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան սահմանած պարագային՝ կը ստուգէ անոնց հաւաստիութիւնը.

6) հարկային մարմինէն կը ստանայ շտեմարանը ձեւաւորելու համար անհրաժեշտ տուեալներ՝ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան սահմանած պարագաներուն եւ կարգով կը ստուգէ անոնց հաւաստիութիւնը.

7) առաջարկութիւններ կը ներկայացնէ հարկային մարմինին՝ շտեմարան ներառուող տուեալներու հաւաստիութիւնը ճշդելու եւ զանոնք փոփոխելու համար.

8) իր լիազորութիւններու շրջանակին մէջ կը քննարկէ կենսաթոշակային օրէնսդրութեան խախտումները.

9) օրէնսդրութեամբ սահմանուած կարգով կը նշանակէ, կը վերահաշուարկէ կենսաթոշակները, կ'ապահովէ կենսաթոշակներու վճարումը կամ կը մերժէ կենսաթոշակ նշանակելու, նշանակուած կենսաթոշակը վերահաշուարկելու դիմումները.

10) կը վարէ շտեմարանը, շտեմարանէն տուեալներ կը տրամադրէ գործատուներուն, ֆիզիքական անձերու եւ պետական մարմիններուն ու կազմակերպութիւններուն.

11) օրենքով սահմանուած կարգով կը քննարկէ կենսաթոշակ նշանակելու, վերահաշուարկելու, վճարելու մասին դիմումները.

12) կենսաթոշակ նշանակելու որոշում կայացնելէ ետք՝ տասը օրուան մէջ կենսաթոշակառուին անվճար կը տրամադրէ կենսաթոշակի վկայական, որուն ձեւը կը սահմանէ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը.

13) կենսաթոշակային ապահովութեան առնչուող հարցերով դիմող անձերուն կ'ապահովէ խորհրդատուութիւն, իսկ անհրաժեշտութեան պարագային կ'աջակցի անոնց՝ պահանջուող փաստաթուղթեր ստանալու գործով.

14) կը համագործակցի համապատասխան հասարակական ու միջազգային կազմակերպութիւններու եւ ֆիզիքական անձերու հետ.

15) կը վարէ կենսաթոշակային ապահովութեան կայքէջը.

16) կը կատարէ սոյն օրենքի դրոյթներէն եւ իրաւական այլ գործողութիւններէ բխող այլ գործառոյթներ:

10. Ո՞ր պահէն կը նշանակուի կենսաթոշակը

Բոլոր անհրաժեշտ փաստաթուղթերը ներկայացնելու պարագային կենսաթոշակը կը նշանակուի՝

ա) դիմելու օրէն.

բ) հաշմանդամ ճանչցուելու օրէն, եթէ կենսաթոշակի նշանակման դիմումը տրուած է այդ օրէն ետք՝ 3-ամսեայ ժամկետի մէջ,

գ) կերակրողի մահուան օրէն, եթէ կենսաթոշակի նշանակման դիմումը տրուած է այդ օրէն ետք՝ 6-ամսեայ ժամկետի մէջ:

11. Կրնա՞ն արդեօք քաղաքացիները բողոքարկել կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում՝ կենսաթոշակին վերաբերուող որոշումները

Կենսաթոշակին վերաբերող որոշումները կրնան բողոքարկուիլ քաղաքացիներու կողմէ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում:

12. Ինչպե՞ս կրնան կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում բողոքարկուիլ կենսաթոշակին վերաբերուող որոշումները

Կենսաթոշակին վերաբերող որոշումները կրնան բողոքարկուիլ ինչպես վերադասութեան, այնպէս ալ դատական կարգով:

13. Հայաստանի Հանրապետութեան երկքաղաքացին ունի՞ արդեօք կենսաթոշակի իրաւունք

Հայաստանի Հանրապետութեան երկքաղաքացին կենսաթոշակի իրաւունք ունի, եթէ ան մշտապէս կամ առաւելապէս կը բնակի Հայաստանի Հանրապետութեան մէջ (Հայաստանի Հանրապետութեան բնակչութեան պետական գրանցամատեանին մէջ հաշուառուած է Հայաստանի Հանրապետութեան մէջ բնակութեան վայրի հասցէով) եւ կենսաթոշակ չի ստանար այլ պետութենէ:

14. Հայաստանի Հանրապետութեան մէջ փախստականի կարգավիճակ չունեցող օտարերկրեայ քաղաքացին ունի արդեօք կենսաթոշակի իրաւունք

Հայաստանի Հանրապետութեան մէջ փախստականի կարգավիճակ չունեցող օտարերկրեայ քաղաքացին կենսաթոշակի իրաւունք ունի, եթէ ան կենսաթոշակ չի ստանար այն պետութենէն, որուն քաղաքացին է:

15. Ո՞րոնք են կենսաթոշակի տեսակները

Օրէնքով կը սահմանուին կենսաթոշակի հետեւեալ տեսակները.

1. աշխատանքային՝

- 1) տարիքային,
- 2) արտօնեալ պայմաններով,
- 3) երկարամեայ ծառայութեան,
- 4) հաշմանդամութեան,
- 5) կերակրողը կորսնցնելու պարագային,
- 6) մասնակի.

2. զինուորական՝

- 1) երկարամեայ ծառայութեան,

- 2) հաշմանդամութեան,
 - 3) կերակրողը կորսնցնելու պարագային.
3. ընկերային՝
- 1) ծերութեան,
 - 2) հաշմանդամութեան,
 - 3) կերակրողը կորսնցնելու պարագային:

16. Կրնա՞յ արդեօք տարբեր կենսաթոշակներու իրաւունք ունեցող միեւնոյն անձը ստանալ մէկէն աւելի կենսաթոշակի տեսակ

Պետական պիտօճէէն նպաստաւորուող տարբեր կենսաթոշակներու իրաւունք ունեցող անձը ունի մէկ կենսաթոշակ ստանալու իրաւունք՝ իր ընտրութեամբ:

17. Աշխատանքային կամ զինուորական կենսաթոշակ ստանալու իրաւունք ունեցող անձին կը նշանակուի՞ արդեօք ընկերային կենսաթոշակ

Անձին ընկերային կենսաթոշակ չի նշանակուիր, եթէ ան ունի սոյն օրէնքով սահմանուած աշխատանքային կամ զինուորական կենսաթոշակ ստանալու իրաւունք

18. Կրնա՞յ արդեօք կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը նշանակել կենսաթոշակ այն անձին համար, որ Հայաստանի Հանրապետութեան մէջ չունի բնակութեան վայր (հասցէ)

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կը կայացնէ կենսաթոշակ նշանակելը մերժելու մասին որոշում, երբ անձը, ըստ բնակչութեան պետական գրանցամատեանին մէջ առկա տուեալներու, չունի Հայաստանի Հանրապետութեան մէջ բնակութեան վայր (հասցէ):

19. Եթէ կենսաթոշակառուն կը փոխէ բնակութեան վայրը, ինչպէ՞ս է կը վճարուի կենսաթոշակը

Եթէ կենսաթոշակառուն կը փոխէ բնակութեան վայրը, ապա պէտք է դիմէ բնակութեան նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում՝ խնդրելով նախկին

բնակութեան վայրէն պահանջել իր կենսաթոշակի գործը: Կենսաթոշակի գործը նախկին բնակութեան վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումէն կը տեղափոխուի բնակութեան նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում տասնօրեայ ժամկետի մէջ: Կենսաթոշակառուի բնակութեան նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակը կը վճարէ նախկին բնակութեան վայրէն անոր կենսաթոշակի գործը ստանալէն ետք: Կենսաթոշակ վճարելը կը վերսկսի կենսաթոշակառուի նախկին բնակութեան վայրին մէջ կենսաթոշակ վճարելը դադրեցնելու օրէն:

20. Ո՞րոնք են կենսաթոշակները վճարելու եղանակները

Կենսաթոշակը կենսաթոշակառուի դիմումին հիման վրայ կրնայ վճարուիլ անկանխիկ կամ կանխիկ եղանակով:

Կենսաթոշակը անկանխիկ եղանակով վճարելը կենսաթոշակի գումարը կենսաթոշակառուի բանկային հաշիւին փոխանցելն է:

Կենսաթոշակը կանխիկ եղանակով վճարելը կենսաթոշակի գումարի տրամադրումն է անձամբ կենսաթոշակառուին կամ անոր փոխարէն կենսաթոշակը ստանալու՝ օրէնքով այդ իրաւունքը ունեցող անձին:

21. Ո՞ր կը վճարէ կազմակերպութիւնը կենսաթոշակառուին կանխիկ եղանակով տրուող կենսաթոշակը

Կազմակերպութիւնը կենսաթոշակը կանխիկ եղանակով կը վճարէ Հայաստանի Հանրապետութեան մէջ կենսաթոշակառուի բնակութեան վայրի հասցէին կամ կազմակերպութեան գրասենեակ՝ կենսաթոշակի գումարը կենսաթոշակ ստացող անձին տրամադրելու միջոցով:

22. Ի՞նչ փաստաթուղթ անհրաժեշտ է ներկայացնել՝ կանխիկ եղանակով կենսաթոշակ ստանալու նպատակով

Կենսաթոշակ ստացող անձը կենսաթոշակի գումարը ստանալու համար համապատասխան մարմնի աշխատողին կը ներկայացնէ իր անձը հաստատող փաստաթուղթը: Աշխատողը կը համադրէ կենսաթոշակ ստացող անձի ներկայացուցած փաստաթուղթի եւ վճարման ցուցակի տուեալները: Անհամապատասխանութիւններ չըլլալու պարագային՝ կազմակերպութեան

աշխատողը կենսաթոշակ ստացող անձին կը տրամադրէ կենսաթոշակի գումարը: Կենսաթոշակ ստացող անձը կը ստորագրէ կենսաթոշակներու վճարման ցուցակին մէջ:

23. Անկանխիկ եղանակով կենսաթոշակ ստացող կենսաթոշակառուն պարտաւոր է արդեօք տարեկան առնուազն մէկ անգամ ներկայացնել դրամատան իր ողջ ըլլալու մասին Հայաստանի Հանրապետութեան մէջ գործունէութիւն իրականացնող նոտարի հաստատած փաստաթուղթ կամ ներկայանալ դրամատուն եւ յայտարարութիւն տալ իր ողջ ըլլալու մասին

Կենսաթոշակը անկանխիկ եղանակով ստացող կենսաթոշակառուն պարտաւոր է տարեկան առնուազն մէկ անգամ պատշաճ կարգով դրամատան ներկայացնել իր ողջ ըլլալու մասին Հայաստանի Հանրապետութեան մէջ գործունէութիւն իրականացնող նոտարի հաստատած փաստաթուղթը կամ ներկայանալ դրամատուն եւ յայտարարութիւն տալ իր ողջ ըլլալու մասին:

24. Հնարաւոր է արդեօք կենսաթոշակի վճարումը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում լիազօրագիր ներկայացնելու պարագային

Այո, կենսաթոշակը կրնայ վճարուիլ Հայաստանի Հանրապետութեան մէջ գործունէութիւն իրականացնող նոտարի վաւերացուցած լիազօրագիրը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում ներկայացնելու պարագային: Կենսաթոշակը լիազօրագիրի հիման վրայ կանխիկ եղանակով վճարելու համար անձը կենսաթոշակառուի բնակութեան վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում կը ներկայացնէ լիազօրագիրը եւ աստոր լուսապատճենը: Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումին մասնագէտը լիազօրագիրի պատճենը կը համեմատէ բնօրինակին հետ, պատճենի վրայ կը կատարէ «Իսկականի հետ ճիշդ է» գրառումը, կը կնքէ տարածքային բաժնի կնիքով եւ կը վերադարձնէ բնօրինակը: Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումի մասնագէտը շտեմարան կը մուտքագրէ լիազօրուած անձի տուեալները, որոնք, կենսաթոշակառուի տուեալներուն հետ միասին կ'արտացոլուին վճարման ցուցակին մէջ՝ որպէս կենսաթոշակը ստանալու իրաւունք ունեցող անձ:

25. Հնարաւոր է արդեօք մէկ լիազօրագիրով անընդմէջ վճարել տասներկու ամսէն աւելի ժամանակահատուածի կենսաթոշակի գումար

Մեկ լիազորագիրով անընդմեջ կրնայ վճարուիլ տասներկու ամսէն ոչ աւելի ժամանակահատուածի կենսաթոշակի գումար՝ սկսած կենսաթոշակ չվճարուած ամիսէն, բայց ոչ աւելի, քան լիազորագիրի գործողութիւնը դադրիլը:

Լիազորագիրը տալու ամսուան յաջորդող տասներկուերորդ ամիսէն ետք կենսաթոշակի գումարը տուեալ լիազորագրով չի վճարուիր:

26. Ի՞նչ ժամկէտի մէջ պէտք է նշանակուի կենսաթոշակը

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը անձի դիմումը եւ անհրաժեշտ փաստաթուղթերը ստանալէն ետք 10 աշխատանքային օրուան մէջ, ըստ անհրաժեշտութեան, կը ստուգէ ներկայացուած փաստաթուղթերու հաւաստիութիւնը եւ որոշում կ'ընդունի կենսաթոշակ նշանակելու կամ կենսաթոշակ նշանակելը մերժելու մասին: Կենսաթոշակ նշանակելու որոշում կայացնելէ ետք՝ 10 օրուան մէջ կենսաթոշակատուին անվճար կը տրամադրուի կենսաթոշակի վկայական:

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակ նշանակելը մերժելու որոշում ընդունելու պարագային 5 աշխատանքային օրուան մէջ աստոր մասին գրաւոր կը տեղեկացնէ կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձին՝ նշելով մերժելու պատճառները եւ որոշումը բողոքարկելու կարգը, իսկ եթէ կենսաթոշակ նշանակելը մերժուած է օրէնքով կամ այլ օրէնքներով սահմանուած կենսաթոշակ ստանալու իրաւունք ունենալու պատճառով, ապա կը ծանուցէ անոր՝ կենսաթոշակի տեսակը փոխելու իրաւունքի եւ աստոր իրականացման կարգին մասին:

27. Ի՞նչ տեղեկութիւններ կը նշուին կենսաթոշակի վկայականին մէջ

Կենսաթոշակի վկայականին մէջ կը նշուին կենսաթոշակատուի անունը, մականունը, հայրանունը, կենսաթոշակի գործի թիւը, կենսաթոշակի տեսակը, աշխատանքային չափը, կենսաթոշակի չափը, կենսաթոշակը նշանակելու եւ վճարելու ժամկէտները: Վկայականը կը կնքէ եւ կը ստորագրէ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումին ղեկավարը:

28. Կենսաթոշակի չափի փոփոխման պարագային կը կատարուի՞ն արդեօք կենսաթոշակի վկայականին մէջ համապատասխան փոփոխութիւններ

Եթէ կը փոխուի կենսաթոշակի չափը, ապա կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումին համապատասխան մասնագէտը կենսաթոշակատուի դիմումին

հիման վրայ կենսաթոշակի գրքոյկին մէջ կը գրառէ կենսաթոշակի նոր չափը: Գրքոյկը կը ստորագրէ եւ կը կնքէ ստորաբաժանումին ղեկավարը:

29. Կենսաթոշակի վկայականը կորսնցնելու պարագային՝ կենսաթոշակատուին կը տրամադրուի՞ արդեօք նոր վկայական

Կենսաթոշակի վկայականը կորսնցնելու պարագային կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակատուին կու տայ նոր վկայական, որուն առաջին էջին վրայ կը կատարէ «Կրկնօրինակ» գրառումը:

30. Իրաւասու՞ է արդեօք կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակ նշանակելու, կենսաթոշակը վերահաշուարկելու կամ կենսաթոշակի տեսակը փոխելու որոշումը ընդունելէն ետք՝ ստուգել ներկայացուած փաստաթուղթերու հաւաստիութիւնը հարցումներ կատարելու կամ օրէնքով սահմանուած այլ միջոցներով

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը, ըստ անհրաժեշտութեան, կրնայ ներկայացուած փաստաթուղթերու հաւաստիութիւնը ստուգել նաեւ կենսաթոշակ նշանակելու, կենսաթոշակը վերահաշուարկելու կամ կենսաթոշակի տեսակը փոխելու որոշումը ընդունելէն ետք՝ փաստաթուղթերը տուած մարմիններուն, կազմակերպութիւններուն հարցումներ կատարելու կամ օրէնքով սահմանուած այլ միջոցներով:

31. Իրաւասու՞ է արդեօք կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձէն պահանջել լրացուցիչ փաստաթուղթեր

Այո, կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտութեան մասին որոշում ընդունելու պարագային 5 աշխատանքային օրուան մէջ ստոր մասին գրաւոր կը ծանուցէ կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձին՝ նշելով, թէ ինչ լրացուցիչ փաստաթուղթ պէտք է ներկայացնէ:

32. Ո՞ր ժամանակահատուածին համար կը վճարուին կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումին մեղքով չվճարուած կենսաթոշակի գումարները

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումի մեղքով չվճարուած կենսաթոշակի գումարները կը վճարուին անցած ամբողջ ժամանակահատուածին համար, որուն ընթացքին անձը կենսաթոշակի իրաւունք ունեցած է: Այն պարագային, երբ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումին մեղքի առկայութիւնը կը բացակայի, չվճարուած կենսաթոշակի գումարը կը վճարուի կենսաթոշակ վճարելու համար դիմելու ամսուան նախորդող երեք տարուան այն ժամանակահատուածին համար, որուն ընթացքին անձը կենսաթոշակ ստանալու իրաւունք ունեցած է:

33. Որո՞ւն կը վճարուի կենսաթոշակատուի մահուան պատճառով չվճարուած կենսաթոշակի գումարը

Կենսաթոշակատուի մահուան պատճառով չվճարուած կենսաթոշակի գումարները կը վճարուին անոր ընտանիքի անդամներուն: Այդ գումարները ամուսինին կամ 14 տարին լրացած զաւկին կը վճարուին անկախ անոր հաշուառման վայրէն, իսկ զաւակին կամ ծնողին, կամ ընտանիքի այլ անդամի՝ կենսաթոշակատուի մահուան օրուան դրութեամբ բնակութեան նոյն վայրին մէջ (հասցէին) անոր հետ հաշուառուած լինելու պարագային:

Անչափահաս կամ խնամակալութեան տակ գտնուող կենսաթոշակատուի մահուան պարագային չվճարուած կենսաթոշակի գումարը կը վճարուի նաեւ անոր օրինական ներկայացուցիչին՝ ծնողքին, որդեգրողին կամ խնամակալին:

Կենսաթոշակատուին հասանելիք, սակայն անոր մահուան պատճառով չվճարուած կենսաթոշակի գումարները կը վճարուին նաեւ այդ գումարները ստանալու իրաւունք ունեցող անձի տուած եւ նոտարի վաւերացուցած լիազօրագիրով:

34. Ո՞ր պարագային կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումին կողմէ կը վճարուի կենսաթոշակատուի մահուան պատճառով չվճարուած կենսաթոշակի գումարը

Կենսաթոշակատուի մահուան պատճառով չվճարուած կենսաթոշակի գումարը կը վճարուի, եթէ դիմումը եւ անհրաժեշտ փաստաթուղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում կը ներկայացուին կենսաթոշակատուի մահէն ետք՝ վեց ամսուան մէջ: Վեցամսեայ ժամկետի մէջ չդիմելու պարագային՝ կենսաթոշակատուի մահուան պատճառով չվճարուած կենսաթոշակի գումարը կը վճարուի ժառանգութեան իրաւունքի վկայագիր ներկայացնող ժառանգին կամ դատարանի վճիռով ժառանգութիւն ընդունած ժառանգին:

35. Ի՞նչ չափով կը վճարուի կենսաթոշակը բնակչության ընկերային պաշտպանության կազմակերպության մէջ (մանկատանը) ապրող ծնողագուրկ անչափահաս անձին:

Բնակչության ընկերային պաշտպանության կազմակերպության մէջ (մանկատանը) ապրող անչափահաս անձին կը վճարուի կերակրողը կորսնցնելու պարագային կենսաթոշակի 50 տոկոսը: Այդ գումարները, մինչեւ անոր 18 տարեկան դառնալը կամ սահմանուած կարգով պետական կազմակերպութենէն հեռանալը, կը կուտակուին անոր անունով յատուկ այդ նպատակով բացուած համապատասխան հաշիւին մէջ եւ անոր 18 տարին լրանալու կամ սահմանուած կարգով պետական կազմակերպութենէն հեռանալու օրուան յաջորդող մէկ ամսուան ընթացքին կը վճարուի միանուագ կարգով:

36. Ի՞նչ չափով կը վճարուի կենսաթոշակը բնակչության ընկերային պաշտպանության կազմակերպության մէջ (ծերանոց) ապրող անձին:

Բնակչության ընկերային պաշտպանության պետական կազմակերպության մէջ (ծերանոց) ապրող կենսաթոշակառուին կը վճարուի նշանակուած կենսաթոշակի աշխատանքային մասը, իսկ այդ կազմակերպության մէջ ապրող՝ զինուորական կենսաթոշակ ստացողներուն՝ նշանակուած կենսաթոշակին 50 տոկոսը:

37. Որո՞ւն կողմէ տրուած վարչական արձանագրութեան քաղուածքին հիման վրայ կը նշանակուի համշանդամութեան կենսաթոշակը

Հաշմանդամութեան կենսաթոշակը կը նշանակուի բժշկա-ընկերային փորձաքննութիւն իրականացնող իրաւասու պետական մարմնէն ստացուած՝ անձին հաշմանդամ ճանչնալու մասին վարչական արձանագրութեան քաղուածքին հիման վրայ: Հաշմանդամութեան սահմանելու օրն է՝ քաղուածքի մէջ «Փորձաքննութիւնը կատարուած է» տողին մէջ նշուած առաջին ամսաթիւը:

38. Ո՞ր պետական մարմինները իրաւասու են բժշկա-ընկերային փորձաքննութեան ոլորտին մէջ իրականացնելու բժշկա-ընկերային փորձաքննութիւն

Բժշկա-ընկերային փորձաքննութիւն կ'իրականացնեն բժշկա-ընկերային փորձաքննութեան ոլորտին մէջ իրաւասու պետական մարմինները, մասնաւորապէս՝ Հայաստանի Հանրապետութեան աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարարութեան Հայաստանի Հանրապետութեան բժշկա-ընկերային փորձաքննութեան գործակալութեան համապատասխան կառուցուածքային

ստորաբաժանումը եւ տարածքային մարմինները՝ բժշկա-ընկերային փորձաքննական յանձնաժողովները:

39. Ինչպե՞ս կ'իրականացուի քրեակատարողական հիմնարկին մէջ պատիժը կրող անձին կենսաթոշակ նշանակելը եւ վճարելը

Քրեակատարողական հիմնարկին մէջ պատիժը կրող անձը իրեն կենսաթոշակ նշանակելու, վճարելու կամ բժշկա-ընկերային փորձաքննութեան ենթարկելու համար գրաւոր կը դիմէ քրեակատարողական հիմնարկի ղեկավարին:

Քրեակատարողական հիմնարկի ղեկավարը պատիժը կրող անձի գրաւոր դիմումին հիման վրայ 10 աշխատանքային օրուան մէջ կը նախապատրաստէ անոր կենսաթոշակ նշանակելու, վճարելու կամ բժշկա-ընկերային փորձաքննութեան ենթարկելու համար անհրաժեշտ՝ օրէնսդրութեամբ սահմանուած փաստաթուղթերը եւ կը ներկայացնէ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում կամ բժշկա-ընկերային փորձաքննութիւն իրականացնող իրաւասու մարմին:

Քրեակատարողական հիմնարկին մէջ պատիժը կրող անձին կենսաթոշակ նշանակելու, վճարելու եւ անոր բժշկա-ընկերային փորձաքննութեան ենթարկելու կարգը կը սահմանէ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը:

40. Ե՞րբ կը դադրի կենսաթոշակ ստանալու իրաւունքը

Կենսաթոշակ ստանալու իրաւունքը կը դադրի՝

1) կենսաթոշակառուի մահուան, ինչպէս նաեւ անոր մահացած կամ անյայտ բացակայող ճանչնալու պարագային.

2) հաշմանդամութեան ժամկետը լրանալու պարագային.

3) կերակրողը կորսնցնելու պարագային նշանակուած կենսաթոշակի սահմանուած ժամկետը լրանալու կամ այդ կենսաթոշակի իրաւունքը կորսնցնելու պարագային.

4) Առնուազն 35 տարուան աշխատանքային չափ ունեցող տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրաւունք տուող տարիքէն մէկ տարի շուտ տարիքային կենսաթոշակ նշանակելէն ետք կենսաթոշակառուի աշխատելու պարագային

Կերակրողը կորսնցնելու պարագային աշխատանքային կենսաթոշակ նշանակելին ետք մահացած կերակրողի՝ մինչև իր 18 տարին լրանալը հաշմանդամ ճանչցուած, աշխատանքային գործունէութեամբ զբաղելու կարողութեան 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող 18 տարեկան եւ անկէ բարձր տարիքի հաշմանդամ զուակի աշխատելու պարագային

Կերակրողը կորսնցնելու պարագային աշխատանքային կենսաթոշակ նշանակելին ետք մահացած կերակրողի՝ տարիքային կենսաթոշակի իրաւունք տուող տարիքը լրացած կամ հաշմանդամ ճանչցուած ծնողներու, ամուսնոյն աշխատելու պարագային կերակրողը կորսնցնելու պարագային, աշխատանքային կենսաթոշակ նշանակելին ետք մահացած կերակրողի՝ չաշխատող եւ զուակներ չունեցող կամ աշխատանքային գործունէութեամբ զբաղելու կարողութեան 3-րդ աստիճանի սահմանափակումով զուակներ ունեցող պապիկի եւ տատիկի աշխատելու պարագային

Կերակրողը կորսնցնելու պարագային աշխատանքային կենսաթոշակ նշանակելին ետք մահացած կերակրողի՝ մահացած (գոհուած) կերակրողի 14 տարին չլրացած՝ համապատասխան կենսաթոշակի իրաւունք ունեցող զուակի, եղբօր, քրոջ կամ թոռան ինամքով զբաղուող, ամուսնոյն կամ ընտանիքի այլ գործունակ չափահաս անդամի կամ օրէնքով սահմանուած կարգով ինամակալ ճանչցուած անձի՝ անկախ տարիքէն, աշխատելու պարագային

5) զինուորական կենսաթոշակ նշանակելին ետք համապատասխան մարմիններուն մէջ զինուորական ծառայութեան անցընելու, ինչպէս նաեւ քրեակատարողական ծառայողի, դատական գործողութիւններու հարկադիր կատարողի, դատախազի կամ դատաւորի պաշտօնի նշանակուելու պարագային.

6) օտարերկրեայ քաղաքացիի կամ քաղաքացիութիւն չունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետութեան մէջ բնակելու իրաւունքի ժամկէտը լրանալու պարագային.

7) Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւնը դադրեցնելու պարագային.

8) Հայաստանի Հանրապետութեան երկքաղաքացիի՝ մշտապէս կամ առաւելապէս օտարերկրեայ պետութեան մէջ բնակութիւն հաստատելու պարագային (Հայաստանի Հանրապետութեան բնակչութեան պետական գրանցամատեանին մէջ օտարերկրեայ պետութեան մէջ իր բնակութեան վայրի հասցէով հաշուառուելու պարագային).

9) օտարերկրեայ քաղաքացիին կամ Հայաստանի Հանրապետութեան երկքաղաքացիին այլ պետութեան մէջ կենսաթոշակ նշանակելու պարագային.

10) կենսաթոշակի իրաւունքը կորսնցնելու կամ կենսաթոշակի գործին մէջ կեղծ (ոչ հաւաստի) փաստաթուղթեր յայտնաբերելու պարագային.

11) Հայաստանի Հանրապետութեան հետ կենսաթոշակային ապահովութեան բնագաւառին մէջ միջպետական համաձայնագիր կնքած պետութիւններ մշտական բնակութեան մեկնող (մեկնած) անձերու կենսաթոշակի գործերը ուղարկելու պարագային:

Սոյն մասին մէջ նշուած պարագաներուն կենսաթոշակ ստանալու իրաւունքը կը դադրի այդ հանգամանքները առաջանալու ամսուն յաջորդող ամսուան 1-էն:

Առկայ (ցերեկային) ուսուցմամբ ուսումնական հաստատութեան մէջ ուսանող անձի՝ կերակրողը կորսնցնելու պարագային կենսաթոշակ ստանալու իրաւունքը կը դադրի տուեալ տարուան յուլիսի 1-էն:

41. Ո՞ր պարագային կրնան կենսաթոշակներէն պահումներ կատարուիլ

Կենսաթոշակէն պահումներ կը կատարուին՝

1) կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումին որոշումով, եթէ՝

ա. կենսաթոշակառուն ներկայացուցած է սխալ տեղեկութիւններ պարունակող փաստաթուղթեր կամ տեղեկութիւն չէ ներկայացուցած իր ընտանիքի անդամներու թիւի փոփոխութեան մասին, կամ չէ տեղեկացուցած այն հանգամանքներուն մասին, որոնց առկայութիւնը կրնար յանգեցնել կենսաթոշակի չափը փոփոխելուն կամ ասոր վճարումը դադրեցնելուն,

բ. սխալմամբ (օրէնքի խախտումով) կենսաթոշակառուին վճարուած են աւելի գումարներ.

2) օրինական ուժի մէջ մտած դատավճիռներու, վճիռներու հիման վրայ:

42. Ո՞ր պարագային կրնայ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակէն պահումներ կատարելու մասին որոշում ընդունել

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակէն պահումներ կատարելու մասին որոշում կ'ընդունի, եթէ աւելի վճարուած գումարի չափը չի գերազանցեր որոշումը ընդունելու ամսուան յաջորդող ամսուան կենսաթոշակի գումարի կրկնապատիկը, եւ առկայ է կենսաթոշակառուի գրաւոր համաձայնութիւնը:

Այն պարագային, երբ աւելի վճարուած գումարի չափը կը գերազանցէ որոշումը ընդունելու ամսուան յաջորդող ամսուան կենսաթոշակի գումարի կրկնապատիկը, կամ առկայ չէ կենսաթոշակառուի գրաւոր համաձայնութիւնը, ապա պահումները կը կատարուին դատական կարգով:

43. Ո՞վ կը կազմէ եւ կը հաշուառէ Հանրային պաշտպանի գրասենեակի մարզի նստավայր այցելած մինակ բնակող կենսաթոշակառուներուն դիմումը

Հանրային պաշտպանի գրասենեակի մարզի նստավայր այցելած քաղաքացիին դիմումը էլեկտրոնային համակարգին մէջ կը կազմէ եւ կը հաշուառէ մարզի հանրային պաշտպանը կամ համապատասխան աշխատակիցը: